

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

*Նվիրվում է պրոֆեսոր  
Գուրգեն Մելիքյանի 85-ամյակին*

№ 20

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2021

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Գրեկյան Երվանդ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Քննարկի Միոգոյան*

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ – 85.....7-9

### Արաբագիտություն

*Հայկ Քոչարյան, Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

«ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ.  
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ՏԵՍԱԿԱՆ ՈՒ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՄԱՍ Բ) .....10-21

*Մերի Չիլիսիյան*

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ԴՈՒՐԱՆՈՒՄ. IHYĀ’ AL-MAWĀT  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.....22-29

*Հարություն Մայժևոյան*

ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՍ  
ՊԱՅՔԱՐՈՒՄ («ԱԼ-ԿԱԻԴԱ»-Ի ՕՐԻՆԱԿՈՎ).....30-39

*Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՇՐՋԱՆԱԿԻ ՄՇԱԿՈՒՄԸ 9/11-ԻՑ ՀԵՏՈ.....40-46

*Համիկ Երիցյան*

ԲԱԶՄԱՍՇԱԿՈՒԹՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ  
ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎՎՈՐՄԱՆ  
ԳՈՐԾՈՆ (ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՕՐԻՆԱԿՈՎ).....47-54

### Թյուրքագիտություն

*Վարուժան Գեղամյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՈՒՐԹԻԱՅԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԵՎ ՀՈՏՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 2019-2021ԹԹ.....55-71

*Մարիամ Մելքոնյան*

ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ» ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ ..... 72-86

*Ռաֆիկ Խաչատրյան*

1974 թ.-ի ԿԻՊՐՈՍ ԹՈՒՐԶԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ ..... 87-98

*Գառնիկ Դավթյան*

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ..... 99-105

*Թամարա Աղանյայան*

ՊԱՆԹՅՈՒՐՔԻՍՏ ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. «ԿՈՄԱՆԴՈՍՆԵՐԻ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ» ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ, ՆՊԱՏԱԿԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1968-1971 թթ.) ..... 106-117

**Իրանագիտություն**

*Լիանա Պետրոսյան*

ԻԻՀ-ՈՒՄ ԹԱԼԻՇ ՆԱՀԱՆԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ Մ. ԱՀՄԱԴԻՆԵՏԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ..... 118-123

*Անի Նահապետյան*

ՀՐԵԱՆԵՐԸ ԿՅՈՒՐՈՍ Բ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐՁԻՆԻՍ ԿԵՐՊԱՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ ..... 124-140

*Նարե Գևորգյան*

ԻԻՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԱԼԻ ԱՔԲԱՐ ՀԱՇԵՄԻ ՌԱՖՍԱՆՋԱՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ..... 141-152

*Յասեր Քարամզադե Հաֆթխանի*

ԹԱԼԻՇԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊՈՆՉԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ..... 153-160

## CONTENT

<i>Knarik Mirzoyan</i> Gurgen Melikyan - 85.....	7-16
---	------

### Arabic Studies

<i>Hayk Kocharyan, Mohammed Haj Ibrahim</i> “PARADIGM OF TERRORISM IN THE 21ST CENTURY: A CRITICAL INVESTIGATION INTO THE DEFINITIONAL, THEORETICAL AND LEGAL FRAMEWORKS ASSOCIATED WITH TERRORISM” SURVEY (PART TWO).....	10-21
--	-------

<i>Meri Chplakhyan</i> «AGRICULTURE» FROM THE PERSPECTIVE OF AL-QUR’AN. DEFINITION OF THE CONCEPT: «IHYĀ’ AL-MAWĀT».....	22-29
--	-------

<i>Harutyun Matevosyan</i> US FOREIGN POLICY CHANGE IN STRUGGLE WITH ISLAMIC EXTREMISM (EXAMPLE OF AL-QAEDA).....	30-39
---	-------

<i>Mohammed Haj Ibrahim</i> EVOLVING LEGAL FRAMEWORKS IN COUNTERING TERRORISM AFTER 9/11.....	40-46
---	-------

<i>Hasmik Yeritsyan</i> MULTICULTURE AS A FACTOR FOR FORMING SOCIOLINGUISTIC SITUATION (EXAMPLE OF THE UNITED ARAB EMIRATES).....	47-54
--	-------

### Turkic Studies

<i>Varujan Geghamyan</i> MAIN THESES OF TURKEY’S STATE DISCOURSE AND RHETORIC ABOUT ARMENIA AND ARMENIANS IN 2019-2021.....	55-71
--	-------

<i>Mariam Melkonyan</i> DEMONSTRATIONS OF ARMENOPHOBIA AND	
---	--

"HATE SPEECH" IN THE TALKS OF ILHAM ALIYEV.....	72-86
<i>Rafik Khachatryan</i> THE CYPRUS TURKISH INVASION OF 1974 AND ITS PRECONDITIONS.....	87-98
<i>Garnik Davtyan</i> AZERBAIJANI ELECTION OVERVIEW.....	99-105
<i>Tamara Aghamalyan</i> PANTURKIST MILITANTS IN TURKEY: THE PROCESS OF FORMULATION, AIMS, ACTIVITY OF THE CAMPS OF COMMANDOS.....	106-117

### **Iranian Studies**

<i>Liana Petrosyan</i> THE DOMESTIC POLITICAL DISCOURSE ON THE FORMATION OF TALYSH PROVINCE IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN DURING THE REIGN OF M. AHMADINEJAD.....	118-123
<i>Ani Nahapetyan</i> JEWS IN THE GREAT POLITICAL PROGRAMS of CYRUS II AND THE LATEST CHARACTER IN "THE BIBLE" .....	124-140
<i>Nare Gevorgyan</i> THE ROLE AND ACTIVITY OF ALI AKBAR HASHEMI RAFSANJANI IN THE ASAMBLEA OF EXPERTS OF PUBLIC ADMINISTRATION OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN.....	141-152
<i>Yaser Karamzadeh Haftkhani</i> AN INVESTIGATION OF THE STRUCTURE OF TALYSHI FOLK POETRY.....	153-160

**ՊԱՆԹՅՈՒՐՔԻՍ ԳՐՈՂՅԻՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ.  
«ԿՈՄԱՆԴՈՍՆԵՐԻ ՃԱՄԱՐՆԵՐԻ» ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ  
ԳՈՐԾՆԹԱՅԸ, ՆՊԱՏԱԿԸ,  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1968-1971 թթ.)**

*Քանայի բառեր՝ Թուրքիա, ԱՇԿ, ՀԳԱԿ, «գրոհայինների ճամբար»,  
պանթյուրքիզ, Թյուրքեշ*

Ազգայնական շարժում կուսակցության (թուրք.՝ Milliyetçi Hareket Partisi, MHP) գործունեության առանձնահատկությունները հասկանալու համար հատուկ նշանակություն ունի վերջինիս պատմության կարևորագույն շրջաններից մեկի՝ 1960-ական թթ. ուսումնասիրությունը: Հենց այս ժամանակաշրջանում կազմավորվեցին ազգայնամոլական շարժման առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշի պանթյուրքիստական կառույցները: Ծայրահեղ ազգայնական գաղափարների հիման վրա ստեղծվեցին Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցության (այսուհետ՝ ՀԳԱԿ, թուրք.՝ Cumhuriyetçi Köylü Millet Partisi – CKMP)<sup>2</sup> կողմից կառավարվող «գրոհայինների ճամբարները», որի առաջնային նպատակն էր Թուրքիայում ակտիվացող ձախերի՝ կոմունիստական շարժման դեմ պայքարը:

Առաջին «գրոհային ճամբարները» ստեղծվում են 1968 թ. երկրի արևմտյան շրջաններում: Կարճ ժամանակ անց դրանց թիվը և աշխարհագրական ընդգրկվածությունը կտրուկ մեծանում է: Ծամբարները համալրվում էին մեծաթիվ թուրք երիտասարդներով, որոնց հիմնական կորիզը կազմում էին համալսարաններում կրթություն ստացող գաղափարապաշտ ուսանողները: Նրանք ուսումնասիրում էին մարտարվեստ, Թուրքիայի և իսլամի պատմություն, պանթյուրքիստական գաղափարախոսություն: Այս կերպ թուրք առաջադեմ երիտասարդության շրջանում արմատավորվում էին պանթյուրքիստական գաղափարներ, ինչն էլ

<sup>1</sup> ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, էլ. փոստ՝ tomaghalyan@yahoo.com

<sup>2</sup> 1965 թ. Ալփարսլան Թյուրքեշն իր մի շարք համախոհների հետ անդամակցում է ՀԳԱԿ-ին և կարճ ժամանակ անց դառնում է կուսակցության նախագահ: 1969 թ. այն վերանվանվում է Ազգայնական շարժում կուսակցության՝ ԱՇԿ:

հիմք հանդիսացավ ավելի ուշ թուրքական ազգայնամոլական ցանցի՝ «գորշ գայլերի»<sup>3</sup> ստեղծման համար:

1961 թ. Սահմադրության ընդունումից հետո Թուրքիայում հիմնվեցին աշխարհայացքային տարբեր մոտեցումներ և տեսականներ ունեցող բազմաթիվ կուսակցություններ, կազմակերպություններ և խմբավորումներ: Քաղաքական տարբեր գաղափարախոսությունների ազդեցության հետևանքով Թուրքիայի հասարակությունը բաժանվեց երկու հիմնական ճամբարների՝ ձախերի և աջերի: Աջ շարժման առաջատար ուժերից ամենաազդեցիկը Սուլեյման Դեմիրելի գլխավորած Արդարություն կուսակցությունն էր (ԱԿ, թուրք.՝ Adalet Partisi, AP): «Կոմունիստական վտանգով» պայմանավորված, 1960-ական թթ. կեսերից ակտիվ գործունեություն սկսեցին ծավալել նաև կրոնական միաբանությունները՝ նուրջուական և նաքըրբենդիական շարժումները, ինչպես նաև թուրք ծայրահեղ ազգայնականներ, որոնք հիմնականում համախմբված էին ՀԳԱԿ շուրջ:

Չախակողմյան ուժերի տարածմանը խոչընդոտելու և այդ շարժումները կասեցնելու նպատակով 1960-ական թթ. ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության կողմից ՆԱՏՕ-ի անդամ երկրներում ստեղծվեցին «կոնտրգերիլաների» (Counter Guerilla, հակապարտիզանական) գաղտնի կազմակերպությունները: Վերջիններիս գործունեությունը համակարգելու նպատակով Թուրքիայում ստեղծվեց Հատուկ պատերազմի բաժինը (այսուհետ՝ ՀՊԲ, Özel Harp Dairesi), որը գործում էր սկզբում Ազգային հետախուզական կազմակերպության (թուրք.՝ Milli İstihbarat Teşkilatı, MİT), իսկ հետագայում Գլխավոր շտաբի ենթակայության տակ: Այսպիսով, ընդհանուր թշնամու գործոնը, ի դեմս ձախակողմյան շարժումների, անխուսափելի դարձրեց ՀՊԲ և «գորշ գայլերի» համագործակցությունը<sup>4</sup>:

1960-ական թթ. վերջին ՀՊԲ-ի օժանդակությամբ ՀԳԱԿ-ը ձեռնամուխ եղավ «կոմանդոսների»՝ գրոհայինների ճամբարների ստեղծման աշխատանքներին, որի առաջնային նպատակն էր կոմունիզմի դեմ պայքարը: Ծամբարները հիմնականում համարվում էին Թուրքիայի համալսարաններում կրթվող ծայրահեղ ազգայնական

<sup>3</sup> Մանրամասն հյուսված աստիճանակարգային ցանցը, որի մեջ մտնում էին թե՛ ԱՃԿ, թե՛ երիտասարդ «գաղափարապաշտների» կազմակերպությունները, թե՛ Ալփարսլան Թյուրքեշի վերահսկողության տակ գործող զինված ջոկատները, անվանում են «գորշ գայլերի» (bozkurtlar) հասարակական-քաղաքական շարժում:

<sup>4</sup> Դումանյան Ա., 1980 թվականի ռազմական հեղաշրջումը Թուրքիայում, Երևան, 2016, էջ 71:



երիտասարդներով, որոնք մեծամասնությամբ հանդիսանում էին ՀԳԱԿ ղեկավարության կողմից 1960-ական թթ. երկրորդ կեսին կազմավորված գաղափարապաշտների կազմակերպությունների անդամներ (ülkücüler)<sup>5</sup>:

Անհրաժեշտ է ընդգծել, որ 1965 թ ընդունված ՀԳԱԿ ծրագրում, որը հեղինակել էր Մուգաֆֆեր Օզդաղը<sup>6</sup>, հստակ ձևակերպված էր գինված հասարակություն ունենալու կարևորությունը: Մասնավորապես՝ ծրագրի 116-րդ հոդվածում նշված էր. «Ամբողջ ժողովրդին արդի պատերազմի կործանումից պաշտպանելու համար կտրվի հարկ եղած տեղեկությունը՝ կհիմնվեն կազմակերպություններ և հաստատություններ: Կապահովվի Թուրքիայի հնարավորությունների և աշխարհաքաղաքական պահանջին համապատասխան պաշտպանության և գոյատևման ուժը»<sup>7</sup>: Մ. Օզդաղը, ով նաև «գրոհային ջոկատներ» հիմնելու գաղափարի հեղինակն էր, դեռևս 1965 թ. կուսակցական ծրագրում հող էր նախապատրաստել այդ գաղափարի իրագործման համար: Նշենք, որ այս տեսակետը առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

«Գրոհայինների ճամբարների» մասին առաջին անգամ տեղեկություն է հրապարակվում Իզմիրում տպագրվող «Դեմոկրատ Իզմիր» թերթում (Demokrat İzmir): Այնտեղ մասնավորապես նշվում էր, որ ՀԳԱԿ-ից պատգամավոր Ռըֆայթ Բայքալը, Իզմիրում կուսակցության երիտասարդական թևի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ հայտնել էր ծովափնյա հատվածում ուսումնամարզական ճամբարների հիմնադրման, այնտեղ մոտ 100 երիտասարդներին ուսում տալու մտադրության մասին:

<sup>5</sup> Գաղափարապաշտների կազմակերպությունների հիմնական նպատակը երիտասարդների շրջանում պանթուրքիստական գաղափարախոսության տարածումն էր:

<sup>6</sup> Մուգաֆֆեր Օզդաղը (1933-2002) հանդիսացել է Թուրքիայի՝ 1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո ձևավորված Ազգային միասնության կոմիտեի (ԱՄԿ՝ ռազմական հեղաշրջումից հետո երկրում իշխանությունը ստացած նորաստեղծ կոմիտե, որը բաղկացած էր 38 անդամից, ղեկավար՝ Ջ. Գյուրսել, քարտուղար՝ Օ. Էրքբանը) անդամ: 1960 թ. Մ. Օզդաղը, Ա. Թյուրքեշը, ինչպես նաև կոմիտեի 12 այլ անդամներ երկրում ռազմական դիկտատուրա հաստատելու փորձերի համար հեռացվում են ԱՄԿ-ից: Մ. Օզդաղը արտրվում է Տոկիո, որտեղ էլ նշանակվում է կառավարության խորհրդատուի պաշտոնում: 1965 թ. մարտին վերադառնալով Թուրքիա անդամագրվում է ՀԳԱԿ, նույն թվականի օգոստոսին նշանակվում կուսակցության գլխավոր քարտուղար: Տե՛ս Tekin A., Alparslan Türkeş ve Liderlik, Ankara 2011, s. 166-167, Poulton H., Top Hat, Grey Wolf and Crescent, Turkish Nationalism and the Turkish Republic, New York, 1997, p. 139.

<sup>7</sup> CKMP Programı, Müreffeh ve Kuvvetli Türkiye İçin, Ankara, 1965, Madde 116, s. 33.

Շարունակելով իր ելույթը՝ Ռ. Բայքալն ընդգծել էր, որ այդ երիտասարդներին պետք է վերածել դինամիկ և մեծ ազդեցություն ունեցող ուժի<sup>8</sup>:

Սկզբնական շրջանում «գրոհայինների ճամբարները» երկուսն էին: 1968 թ. հուլիսին Ռ. Բայքալի գլխավորությամբ Իզմիրի Գյումուլդերե վայրում հիմնադրվում է առաջին «գրոհայինների ճամբարը», որտեղ ռազմական խիստ կարգապահությամբ կրթվում էին ավելի քան 100 ծայրահեղ ազգայնական երիտասարդներ: Վերջիններիս կարգապահությունն ու ուսուցումն ապահովվում էր Անկարայից գործուղված երկու նախկին զինվորականների կողմից: Ճամբարի անվտանգությունն իրականացնում էին զինված աշխատակիցները: Ճամբարների երկրորդ մասնաճյուղը հիմնվում է Անկարայում, որը գլխավորում էին Ա. Թյուրքեշի օգնական Դյունդար Թաշերն ու ՀԳԱԿ երիտասարդական թևի ղեկավար Սեդի Սոմունջուօղլուն<sup>9</sup>:

Կարճ ժամանակ անց կազմակերպության աշխարհագրությունն ընդլայնվում է. բացի Անկարայից, Ստամբուլից, Իզմիրից և Ադանայից ճամբարներ են հիմնվում Ղազիայնթափի (Այնթապ), Կայսերի (Կեսարիա), Մերսին, Կոնիա, Չանքըրը, Մուդանիա, Թոքաթ (Եվրոկիա), Ամասիա, Անթալիա, Սամսուն, Կարս, Էրզրում, Բուրսա և Տրապիզոն քաղաքներում<sup>10</sup>: Ամենամեծն Ադանայում հիմնված Յունուրթալըքի ճամբարն էր, որտեղ ուսում էին ստանում շուրջ 350 երիտասարդներ<sup>11</sup>: Ճամբարների ընդհանուր թիվը 1969 թ. հասնում է 28-ի, իսկ անդամներինը՝ 1000-ի<sup>12</sup>: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ արդեն 1970 թ. դեկտեմբերին Թուրքիայի ավելի քան 35 շրջաններում գործում էին շուրջ 150 ճամբարներ, որոնց անդամագրված երիտասարդների թիվը հասնում էր 15.000-ի<sup>13</sup>: Սակայն Ա. Թյուրքեշի նպատակն էր 100.000 գրոհային ունենալ<sup>14</sup>: Ավելին,

<sup>8</sup> Bozkurt C., 1968 Olaylarının Türk Siyasetine Etkisi: Milliyetçi Hareketin "Komando" Kampları, Türk Dünyası Araştırmaları, Cilt 117, s. 72.

<sup>9</sup> Tekin A., նշվ. աշխ., էջ 231:

<sup>10</sup> Yaşlı F., Kinimiz Dinimizdir: Türkçü Faşizm Üzerine Bir İnceleme, İstanbul, 2014, s. 213.

<sup>11</sup> Feyzioğlu T., Firtına Yıllarda Ülkücü Hareket, İstanbul, 2005, s. 66.

<sup>12</sup> Yanardağ M., MHP Değişti mi? Ülkücü Hareketin Analitik Tarihi, İstanbul, 2002, s. 40.

<sup>13</sup> Bozkurt C., նշվ. աշխ., էջ 72:

<sup>14</sup> Karabacak A. B., Üç Hilâlin Hikayesi, İstanbul, 2011, s. 55., տե՛ս նաև Аксененко А. Г., Борьба политических партии Турции за влияние на молодежь, 1920-1980, Москва, 1986, стр. 85.

1970-ական թթ. վերջին Ա. Թյուրքեշը կարճ ժամանակահատվածում կարող էր մոբիլիզացնել շուրջ 200.000 համակիրների<sup>15</sup>:

Ճամբարներում ուսումն իրականացվում էր հիմնականում ամռան ամիսներին, 15-20 օր տևողությամբ հատուկ կառուցված վրաններում: Ուսումնամարզական այս ճամբարներում գործում էր ռազմական խիստ կարգուկանոն և պաշտոնակարգություն, որին անձամբ հետևում էր ճամբարների առանցքային ղեմքերից Դ. Թաշերը: Երիտասարդները հիմնականում սովորում էին ռազմարվեստ, մեծ ուշադրություն էր հատկացվում նաև մարտարվեստներին՝ բոքս, ձյուդո, կարատե, որոնք դասավանդվում էին ՀԳԱԿ նախկին սպաների կողմից<sup>16</sup>: Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ ՀԳԱԿ-ում զինվորականների և բարձրաստիճան սպաների մեծաթիվ ներկայությունն ու ակտիվ գործունեությունն էական ազդեցություն ունեին ոչ միայն ճամբարների, այլ նաև կուսակցության գործունեության համակարգման մեջ: Երիտասարդներին սովորեցնում էին՝ ինչպես գոյատևել ամենադժվար պայմաններում և պայքարել թշնամու դեմ: Հատուկ ուշադրություն էր դարձվում հատկապես «կոմանդոսների» գաղափարական պատրաստվածությանը՝ նրանց մեջ սերմանելով պանթյուրքիստական գաղափարներ: Դրան մեծապես նպաստում էր ազգային, կրոնական և մշակութային արժեքների խորացված ուսումնասիրությունը: Այդ նպատակով տարբեր համալսարանների դասախոսներ և հոգևորականներ, հիմնականում երեկոյան ժամերին դասախոսություններ էին անցկացնում Թուրքիայի պատմության և կրոնի վերաբերյալ<sup>17</sup>: Բացի այդ, ճամբարներում երիտասարդների համար հնչում էր թուրքական ժողովրդական, ինչպես նաև ադրբեջանական և «թուրքեստանյան» երաժշտություն<sup>18</sup>:

<sup>15</sup> Սաֆրասայան Ռ., Возвращение “серых волков”: Консервативная партия в политической жизни Турции (1983-1985), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIII, Երևան, 2004, էջ 256:

<sup>16</sup> Soylu D. (Yılmaz Yalçiner), Komando Sorunu, Gençler araç mı, amaç mı?, Ankara, 1975, s. 34.

<sup>17</sup> Bozkurt C., նշվ., աշխ., էջ 75:

<sup>18</sup> Soylu D. (Yılmaz Yalçiner), նշվ. աշխ., էջ 40: «Թուրքեստան» հասկացությունը կիրառվել է դեռևս միջնադարից արաբապարսկական, եվրոպական և հայկական աղբյուրներում որպես թյուրքալեզու ցեղերի բնակության, հատկապես միջինասիական տարածքների բնդհանրական անվանում: Այս հասկացությունը նույն նշանակությամբ կիրառվել է արևմտյան և խորհրդային հասարակական գիտությունների բնագավառում: Թուրքական և թյուրքալեզու գիտական աշխարհը, «Թուրքեստան» հասկացության շրջանակները լայնացնելով, նրանում ներառում է թյուրքալեզու

Նման ուսուցումը նպատակ էր հետապնդում դաստիարակել և կրթել երիտասարդներին՝ ազգային, հայրենասիրական, կրոնական և որ ամենակարևորն է, պանթյուրքիստական գաղափարախոսությունների միջոցով:

Անդրադառնալով ճամբարների ֆինանսական խնդրին, հարկ ենք համարում ընդգծել, որ թուրքական մամուլում այդ ժամանակաշրջանում սկսեցին հակասական տեղեկություններ շրջանառվել: Մասնավորապես, ձախակողմյան կողմնորոշում ունեցող ամսագրերում գերակշռում էր այն տեսակետը, որ ճամբարների ֆինանսական ծախսերը հոգում է ԱՄՆ-ը, որը հետաքրքրված է Թուրքիայում կոմունիզմի դեմ պայքարի հարցում: Ի պատասխան՝ ազգայնական հայացքներով հայտնի «Դևլեթ» (Devlet) թերթը ընդգծում է, որ ճամբարների ֆինանսները գոյանում են հիմնականում կուսակցության անդամավճարների միջոցով, ինչպես նաև՝ մանր առևտրականների օգնությամբ<sup>19</sup>:

ՀԳԱԿ առաջնորդների և գրոհայինների ճամբարների ղեկավարների տարբեր հայտարարություններ վկայում են այն մասին, որ ծայրահեղ ազգայնական երիտասարդները պատրաստ էին կատաղի պայքար մղել Թուրքիայում արմատներ գցած կոմունիստական կազմակերպությունների դեմ: Այս համատեքստում չափազանց կարևոր է Ա. Թյուրքեշի 1968 թ. օգոստոսի 18-ին արված հայտարարությունը. «կուսակցության երիտասարդական թևն ունի տարատեսակ գործառույթներ՝ սպորտային, մշակութային, ի դեպ նրանց դասավանդվում է նաև ձյուդո: Կոմունիստները երկիրն անտեր կարծելով՝ չեն կարող փողոցային տիրապետություն կառուցել: Մենք մեր երիտասարդներին մարտնչող ենք դաստիարակում: Մեր երիտասարդները հայրենիքին են ծառայում և ծառայելու են: Նրանց հասկանալի լեզվով կրթատրենք, որ մեր երկրում հայրենակից, ազգայնական երիտասարդներ կան»<sup>20</sup>: Այս հայտարարությունը մեծ արձագանք գտավ մամուլի՝ հատկապես ձախ կողմնորոշում ունեցող թերթերի վրա: Պանթյուրքիզմի տարածումը և ազդեցության մեծացումը լուրջ անհանգստություն էր պատճառում սոցիալիստական կողմնորոշում ունեցող շրջանակներին: Վերջիններս իրավացիորեն համարում էին, որ իրենց վերջնականապատակի՝ խորհրդային կարգերի հաստատման ճանապարհին միակ և վտանգավոր խոչընդոտն

ժողովուրդների ոչ միայն զուտ լեզվական ընդհանրացումը, այլ նաև մեկ ամբողջական էթնոմշակութային համակարգի պատկանելիությունը:

<sup>19</sup> Tekin A., նշվ. աշխ., էջ 242:

<sup>20</sup> Kadir K., Alparslan Türkeş, Türk Milliyetçiliği Fikri ve CKMP, Ankara, 2017, s. 143.

ազգայնամոլ գրոհայիններն են: Դա էր պատճառը, որ ճախակողմյան ուժերը առիթը բաց չէին թողնում սուր քննադատության ենթարկելու Ա. Թյուրքեշին և նրա կողմնակիցներին:

Ճամբարներում պաշտպանության և հարձակման մեջ մասնագիտացված երիտասարդներն իրենց գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորություն ստացան 1968 թ. դեկտեմբերի 30-ին: Անկարայի Բարձրագույն մանկավարժական դպրոցի ուսանողական միության ընտրությունները վերածվեցին աջ և ճախ կողմնորոշում ունեցող ուսանողների միջև բախումների, բազմաթիվ երիտասարդներ տարբեր աստիճանի վիրավորում ստացան<sup>21</sup>: Այլ ուսումնական հաստատություններում ևս երկու կողմերի միջև անզիջում պայքար ծավալվեց: Այսպես, Անկարայի Քաղաքագիտության ֆակուլտետի ուսանողական հանրակացարանը հարձակման ենթարկվեց մահակներով և քարերով զինված «կոմանդոսների» կողմից, որը հանգեցրեց արյունահեղության: Գրոհայինների հարձակումներն ուղեկցվում էին՝ *որտեղի՞ց ես գալիս՝ Էրզնենկոնից* կարգախոսով<sup>22</sup>: Հարկ ենք համարում նշել նաև, որ ուսումնական հաստատությունների որոշ դասախոսներ ծաղրուծանակի ենթարկվեցին ծայրահեղ ազգայնական երիտասարդների կողմից, որի առիթով ցանկանում ենք ընդգծել Բարձրագույն մանկավարժական դպրոցի ուսանողական միության նախագահ Էմրուլահ Քարաքոքի հայտարարությունը, որով նա քննադատում էր կառավարությանը և ոստիկանությանն անգործության մեջ<sup>23</sup>:

Ուսանողական երկու ճակատների միջև երկար և անզիջում պայքարը շարունակվեց նաև 1970 թ.: Գրոհային երիտասարդների կողմից հարձակման ենթարկվեցին Անկարայի Իրավաբանական և Լեզվա-պատմա-աշխարհագրության ֆակուլտետները: Անվտանգության ուժերի միջամտության արդյունքում բերման ենթարկվեցին իրադարձություններին մասնակից 18 ազգայնամոլ երիտասարդներ: Քառասյին իրավիճակում հայտնվեցին նաև Ստամբուլի Գրականության և Արվեստի ֆակուլտետները, որոնք գրոհայինների և գաղափարապաշտների կազմակերպությունների երիտասարդների հարձակման արդյունքում անցել էին վերջիններիս վերահսկողության տակ: Երկու ֆակուլտետների ղեկավարությունը

<sup>21</sup> Landau J.M., *Radical Politics in Modern Turkey*, Leiden, 1974, p. 216

<sup>22</sup> Arslan T., նշվ., աշխ., էջ 238: Ըստ թյուրքական առասպելի՝ «Էրզնենկոն» թյուրքերի՝ Միջին Ասիայում գտնվող նախահայրենիքն է:

<sup>23</sup> Bozkurt C., նշվ. աշխ., էջ 76:

հարկադրված էր հայտարարել դասընթացների անորոշ ժամանակով դադարեցման մասին<sup>24</sup>:

Համալսարաններում ընթացող իրադարձություններին հետևեց Թուրքիայի հեղափոխական երիտասարդության դաշնության (ԴԵՎ-ԳԵՆՉ, թուրք.՝ Türkiye Devrimci Gençlik Federasyonu) կոշտ արձագանքը: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում վերջինիս նախագահ Էրթուղրուլ Բյուրքյուլի հայտարարությունը՝ «...Մենք թույլ չենք տա, որ ֆաշիզմը գրոհի: Այսուհետ մենք հավաքելու ենք մեր ուժերը և հարվածելու ենք նրանց ամենաթույլ տեղերին: Մեր պայքարն ընթանալու է արյան կրակի մեջ»<sup>25</sup>:

Կարճ ժամանակ անց երկու կողմերի միջև կատաղի պայքարը և բողոքի դրսևորումները համալսարաններից տեղափոխվեցին փողոց՝ աստվությունն ու բռնությունը դարձնելով էլ ավելի զանգվածային, երիտասարդների մեջ խորացնելով առկա բևեռացումը:

Գրոհայինների շարքերի ընդլայնումը և տարբեր գաղափարախոսություններ կրող թուրք երիտասարդների միջև բախումները հասարակական-քաղաքական շրջանակներում բավականին կոշտ դիրքորոշման արժանացան, որոնք ժամանակի ընթացքում ավելի սուր շեշտադրումներ ստացան: Արդեն 1969 թ. հունվարի 2-ին ՀԺԿ գործադիր խորհուրդը՝ Իսմեթ Ինյոնյուլի նախագահությամբ, մեղադրեց «կոմանդոսներին» երկրում զինված բախումներ հրահրելու մեջ, միաժամանակ պնդելով, որը ՀԳԱԿ գործողությունները, համաձայն կուսակցությունների մասին 107-րդ հոդվածի առաջին մասի, որակվում է որպես հանցագործություն և պահանջ ներկայացրեց անհապաղ արգելել կուսակցության գործունեությունը: Ի պաշտպանություն գրոհայինների՝ Ա. Թյուրքեշը ՀԺԿ մեղադրանքները հերյուրանք որակեց՝ շարունակելով պնդել, որ իր երիտասարդների գործողությունները սահմանափակվում են միայն կոմունիստական քարոզչության դեմ պայքարով<sup>26</sup>:

Առաջնորդվելով վերոնշյալ 107-րդ հոդվածի 1-ին մասով՝ Անկարայի դատախազությունը հարցաքննության հրավիրեց ՀԳԱԿ բոլոր այն առաջնորդներին, որոնք որևէ առնչություն ունեին գրոհային երիտասարդների կրթության հարցում: Այս համատեքստում կարևոր է հատկապես ՀԳԱԿ գլխավոր խորհրդի անդամ Դ. Թաշերի՝ 1969 թ. հունվարի 4-ին արված հայտարարությունը. «Այդ ճամբարների հետ

<sup>24</sup> Նույն տեղում:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 77:

<sup>26</sup> ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Бюллетень турецкой прессы, Вопросы внешней политики, 09.01.1969, стр. 2,

ՀԳԱԿ-ը ոչ մի առնչություն չունի: Դրանք ուսումնամարզարական ճամբարներ են, որոնք հիմնադրվել են Թուրքիայի ազգային ուսանողական միության կողմից (թուրք.՝ Milli Türk Talebi Birliği, MTTB): Վերջինիս անդամներից ոմանք կարող են լինել մեր կուսակիցները, ոմանք էլ՝ պարզապես կողմնակիցները»: ՀԳԱԿ փոխնազահ Իսմայիլ Հաքքը Յըլանըօղլուն է, արձագանքելով դատախազությանը, նշեց. «Այս երկիրը կոմունիստների ծառան չէ, այլ Էրզենեկոնի աշյուծը»<sup>27</sup>, այսպիսով իր աջակցությունը հայտնելով ազգայնամոլ երիտասարդներին: Հատկապես ուշագրավ էր ՀԳԱԿ նախագահ Ա. Թյուրքեշի կողմից կազմված շրջաբերականը, որը միտված էր կուսակցության գործունեությանն ու հնչող մեղադրանքներին պարզաբանումներ տալուն.

• «ՀԳԱԿ-ը իր սուրբ պարտականությունն է համարում քաղաքական գործունեությունն իրականացնել միմիայն Սահմանադրության և օրենքի շրջանակներում:

• Կուսակցությունն այն կարծիքին է, որ կոմունիզմը համարվում է ամենակործանարար վտանգը Թուրքիայի համար: Այդ իսկ պատճառով, կոմունիզմի դեմ պայքարը ՀԳԱԿ ազգային պարտքն է:

• ՀԳԱԿ գլխավոր նպատակն է թույլ չտալ, որպեսզի թուրք երիտասարդությունը փչանա սրճարաններում, խաղասեղանների շուրջ, պարասրահներում կամ հասարակած տներում:

• ՀԳԱԿ պարտականությունն է պաշտպանել մեր երիտասարդներին կոմունիստական վտանգներից, որոնց նպատակն է խախտել Թուրքիայի ազգային միասնությունն ու ամբողջականությունը և ծառայել օտար շահերին: Անհրաժեշտ է, որպեսզի մեր երիտասարդներին սովորեցնենք ընդդիմանալ կոմունիստական շարժումներին և փողոցային կռիվներին»<sup>28</sup>:

Գրոհայինների ճամբարների և ՀԳԱԿ գործունեությունը տևական ժամանակ շարունակում էր մնալ քաղաքական շրջանակների քննարկման թեմա: Ամենակոշտ դիրքերից, ինչպես և նախկինում, հանդես էր գալիս ՀԺԿ-ն: Վերջինիս քննադատության թիրախում էր գտնվում իշխող Արդարություն կուսակցությունը ևս, քանզի ՀԺԿ համարում էր, որ արմատական գրոհայինները չէին կարող բացահայտ խախտել օրենքը, առանց իշխանության իմացության և թույլտվության<sup>29</sup>: Արդարություն կուսակցությանն ուղղված

<sup>27</sup> Komandolar Tartışması Devam Ediyor, Milliyet, 06.01.1969

<sup>28</sup> Türkeş: CKMP, Komando Kampı Kurmamıştır, Cumhuriyet, 12.01.1969: Նշենք, որ շրջաբերականը առաջին անգամ է հրատարակվում հայերեն:

<sup>29</sup> CHPye Göre Tehlike Var, Cumhuriyet, 12.01.1969

մեղադրանքները, կարծում ենք ունեին յուրք հիմնավորումներ. ինչպես նշում է Ֆաթիհ Յաշլըն, դեռևս 1965 թ. հունիսի 8-ին Անկարայի Քրզըլայ հրապարակում անձամբ Սուլեյման Դեմիրելի կարգադրությամբ և ոստիկանության անմիջական մասնակցությամբ, ձախ կողմնորոշում ունեցող Թուրքիայի աշխատավորական կուսակցության (թուրք.՝ Türkiye İşçi Partisi, TİP) երիտասարդները «Դյունւշում» (*Dönüşüm*) ամսագրի վանառքի ընթացքում ենթարկվում են ԱԿ և ՀԳԱԿ երիտասարդների կողմից հարձակման<sup>30</sup>:

Պանթյուրքիստների գործունեությունն օրակարգի հարց էր նաև ԹԱՄԺ-ում, որտեղ մեծամասամբ հնչում էին երևույթը քննադատող տարբեր հայտարարություններ և ելույթներ: Հետաքրքրություն է ներկայացնում հատկապես Թուրքիայի Հանրապետության վարչապետ, Արդարություն կուսակցության նախագահ Սուլեյման Դեմիրելի հայտարարությունը. «կոմունիզմի դեմ պայքարը թույլատրելի չէ իրականացնել փողոցում»<sup>31</sup>: Իրականում այն փորձ էր քողարկելու իշխանության աջակցությունը ՀԳԱԿ-ը՝ ձախակողմյան ուժերի դեմ պայքարի հարցում:

Չնայած այն հանգամանքին, որ ՀԳԱԿ ղեկավարությունը փորձում էր պարզաբանումներ տալ ծայրահեղ ազգայնական երիտասարդների գործառույթների վերաբերյալ, և պնդել, որ որևէ կապ չկա ՀԳԱԿ և «կոմանդոսների» միջև, այնուամենայնիվ, նրանց հայտարարությունները հակառակն էին վկայում: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում հատկապես Ա. Թյուրքեշի մի շարք հայտարարություններ. «Մենք երբևէ չենք նշել, որ մեր երիտասարդները ստանձնելու են այնպիսի գործառույթներ, որոնք վերապահված են միայն պետության զինված ուժերին: ...Այն երիտասարդներին, որոնց դուք անվանում են գրոհային, իրականում պաշտպանում են մեր պետությունը»<sup>32</sup>: «ՀԳԱԿ-ը այժմ երիտասարդների կուսակցություն է...: Թող այլ կուսակցություններ նույնպես ստեղծեն երիտասարդական կազմակերպություններ...: ՀԳԱԿ-ը ամենաուժեղ երիտասարդական կուսակցությունն է»<sup>33</sup>: Այս հայտարարությամբ պանթյուրքիստների առաջնորդը վերջապես ընդունում էր կուսակցության և գրոհայինների անմիջական կապը, բացի այդ, սա մարտահրավեր էր բոլոր այն

<sup>30</sup> Yaşlı F., նշվ. աշխ., էջ 208:

<sup>31</sup> Komandolar Tartışması Devam Ediyor, Milliyet, 06.01.1969

<sup>32</sup> Koalisyon Hükümetleri, Koalisyon Protokolleri, Hükümet Programları ve Genel Kurul Görüşmeleri, Türkiye Büyük Millet Meclisi, Cilt 2, s. 1209.

<sup>33</sup> Sanlı F.S., Cumhuriyetçi Köylü Millet Partisinden Milliyetçi Hareket Partisine Tarihsel Sürec, İdeoloji ve Politika, Doktora Tezi, Ankara, 2017, s. 369.



քննադատներին, որոնք տևական ժամանակ պահանջում էին արգելել ՀԳԱԿ գործունեությունը:

«Կոմանդոսները» լայն արձագանք են գտնում նաև թուրքական մամուլում: Հրապարակված հոդվածներում զգալի տեղ էին հատկացնում երիտասարդ գրողայիններին և ՀԳԱԿ-ը: Վերջինիս՝ երիտասարդական կազմակերպություններին ցուցաբերած օժանդակությամբ պայմանավորված, թուրքական թերթերում և ամսագրերում սկսեց ակտիվորեն շրջանառվել այն թեզը, որ Ա. Թյուրքեշի վերջնական նպատակը երկրում ֆաշիստական կարգերի հաստատումն է:

Գրողային երիտասարդների գործունեությանն անդրադարձան նաև արտասահմանյան մամուլում: ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հոդվածագիրները ԱՇԿ գրողայիններին նմանեցնում էին *նացիոնալ սոցիալիստներին*, իսկ նրանց աշխատելու մեթոդները՝ նացիզմի հետ, միաժամանակ պնդելով, որ ճամբարների երիտասարդները հիմնականում կրոնական դպրոցի ուսանողներ են և նրանք դաստիարակվել են օտարների և ոչ մուսուլմանների հանդեպ ստեղծությամբ:

Ծայրահեղ ազգայնական ոգով հրատարակվող թերթերը և ամսագրերը հատկապես «Դևլետը» (Devlet) և «Միլլի Հարեթեթը» (Milli Hareket), իրենց հոդվածներով արձագանքում էին ընդդիմախոսներին՝ պաշտպանելով «կոմանդոսներին»: Ուշագրավն այն է, որ եթե նախկինում ազգայնամոլները քննադատում էին մեծամասամբ ձախերի կողմից շրջանառվող գրողային եզրույթը, ապա ժամանակի ընթացքում նրանք ևս չեն զուշանում այն գործածելուց՝ շատ դեպքերում ընդունելով որպես գովաբանություն<sup>34</sup>:

Թյուրքեշի «գրողայինների ճամբարներն» իրենց ակտիվ գործունեությունը շարունակեցին ընդհուպ մինչև 1970-ական թթ. վերջը: 1971 թ. մարտի 12-ին՝ Թուրքիայում տեղի ունեցած «Հուշագրային հեղաշրջումից» հետո, ԱՇԿ առաջնորդ Ա. Թյուրքեշը որոշում է կայացնում լուծարել կազմակերպությունը, իսկ «գրողային» եզրույթն արգելում է<sup>35</sup>: 1970-ական թթ. ԱՇԿ երիտասարդները, որոնք համարվում էին պանթուրքիզմի գաղափարախոսության կրողներ, շարունակում են գրողայինների գործառույթները՝ այս անգամ «գորշ գայլեր» կամ «գաղափարապաշտներ» անվամբ:

Այսպիսով, ուսումնասիրելով գրողայինների ճամբարների գործունեությունը 1960-ական թթ. վերջին և 1970-ական թթ. սկզբին,

<sup>34</sup> Bozkurt C., նշվ., աշխ., էջ 81:

<sup>35</sup> Akpınar H., Kurtların Kardeşliği: CKMP'den MHP'ye (1965-2005), İstanbul, 2005, s. 64.

կարելի է եզրակացնել, որ այն զանգվածային բնույթ էր ստացել և տարածում գտել գրեթե ողջ Թուրքիայում: ՀԳԱԿ/ԱՇԿ-ը՝ պանթյուրքիստների առաջնորդ Ա. Թյուրքեշի գլխավորությամբ, ստանալով արտաքին և ներքին տարբեր շրջանակների աջակցությունը, կարողացել էին երիտասարդ գրոհայիններին վերածել Թուրքիայում հզորացող ձախերի դեմ պայքարում միակ արդյունավետ հակակշռի: Բացի այդ, կարճ ժամանակամիջոցում հազարավոր երիտասարդներ դարձան պանթյուրքիստական գաղափարախոսության կրողներ և հետագայում չափազանց կարևոր նշանակություն ունեցան ԱՇԿ կայացման և հզորացման գործընթացում:

**ПАНТЮРСКИЕ БОЕВИКИ В ТУРЦИИ:  
ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ, ЦЕЛЬ, ДЕЯТЕЛЬНОСТЬ  
ЛАГЕРЕЙ КОММАНДОСОВ**

*Тамара Агамалян*  
(Резюме)

В статье рассматриваются история лагерей боевиков в Турции 1968-1971 гг. Для понимания деятельности партии Национального движения была изучена история партии 1960-ых гг. В работе детально представлены цели создания, процесс формирования и деятельность лагерей боевиков. Подчеркиваются предварительные условия, которые способствовали формированию групп, а так же коротко представлены результаты деятельности лагерей и причины их ликвидации.

**PANTURKIST MILITANTS IN TURKEY: THE PROCESS OF  
FORMULATION, AIMS, ACTIVITY OF THE CAMPS OF  
COMMANDOS**

*Tamara Aghamalyan*  
(Summary)

The article describes the history of the guerrilla camps in Turkey from 1968 to 1971. To understand the activities of the National Movement Party, the history of the 1960s was studied. The work details the purpose and process of camp formation and activities of that camps. The preconditions that led to the formation of the teams are highlighted, as well as the results of the camps and the reasons for their dismantling.